**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

Ալֆրեդ Քոչարյան, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

2. **Գործուղման վայրը և ժամկետները**

Լյուքսեմբուրգի Դքսություն, ք. Լյուքսեմբուրգ, մայիսի 4-7, 2026 թ.

3. **Հրավիրող կողմը**

Եվրոպայի Խորհրդի «Մշակութային ուղիների» եվրոպական ինստիտուտ

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Եվրոպայի Խորհրդի Ընդլայնված մասնակի համաձայնագրի կառավարման խորհրդի 2026 թ. հանդիպմանը մասնակցություն

5. **Քննարկված թեմաները**

- ✓ Եվրոպայի խորհրդի մշակութային ուղիների 2025-2026 թթ. շրջափուլի նոր հայտերի հավաստագրում, ընթացիկ ուղիների վերահավաստագրում
- ✓ 2026 թվականի գործողությունների ծրագրի ներկայացում և հաստատում
- ✓ Երկրների քարտեզագրման փաստաթղթերի ընդունում (Խորվաթիա, Լիտվա)
- ✓ 14-րդ խորհրդատվական ֆորումի եզրակացություններն ու արձագանքները (Կապադովկիա, Թուրքիա)
- ✓ Ընդլայնված մասնակի համաձայնագրի 15-րդ տարեկան ոչ ֆորմալ խորհրդակցական համաժողովի ընթացիկ աշխատանքների քննարկում (Երևան, Հայաստան)
- ✓ Համագործակցության հուշագրի ստորագրում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Եվրոպայի խորհրդի «Մշակութային ուղիներ» ընդլայնված մասնակի համաձայնագրի քարտուղարության հետ
- ✓ Երիտասարդական հարցերի վերաբերյալ աշխատանքային խմբի զեկույց
- ✓ Մշակութային երթուղիների ծրագրի 40-ամյակ. կարծիքների փոխանակում
- ✓ Բյուրոյի մեկ անդամի ընտրություն (2026–2028)
- ✓ Կառավարման խորհրդի հաջորդ նիստի ամսաթվի որոշում
- ✓ Համառոտ զեկույցի (որոշումների ցանկ) ընդունում

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

2026 թ. մայիսի 5-7-ը տեղի ունեցավ Եվրոպայի Խորհրդի Ընդլայնված մասնակի համաձայնագրի կառավարման խորհրդի տարեկան նիստը, որի շրջանակում հաստատման էին ներկայացվել մի շարք նոր «Մշակութային ուղիների» հավաստագրման և «Մշակութային ուղիների» ընթացիկ հավաստագրման հայտեր:

Մայիսի 6-ին հանդես եմ եկել ելույթով՝ Եվրոպայի Խորհրդի Ընդլայնված մասնակի համաձայնագրի կառավարման խորհրդին հայտնելով ԵԽ մշակութային ուղիների 15-րդ տարեկան խորհրդակցական համաժողովը Հայաստանում անցկացնելու վերաբերյալ:

Հանդիպման ընթացքում քննարկվել է նաև 15-րդ տարեկան խորհրդակցական համաժողովի թեմատիկ և կազմակերպչական հարցերի շրջանակը:

Միևնույն ժամանակ մայիսի 6-ին ես և Եվրոպայի խորհրդի «Մշակութային ուղիներ» ընդլայնված մասնակի համաձայնագրի (EPA) կառավարող խորհրդի գործադիր քարտուղար Ռուի Գոմեշը ստորագրել ենք Համագործակցության հուշագիր Եվրոպայի խորհրդի «Մշակութային ուղիներ» ընդլայնված մասնակի համաձայնագրի քարտուղարության և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության միջև:

Մշակութային կապերի զարգացման նպատակով քննարկումներ եմ ունեցել Իսպանիայի, Իտալիայի, Ֆրանսիայի և Հունաստանի ներ

Աշխատանքային ոչ պաշտոնական քննարկումներ եմ ունեցել անդամ պետությունների (Իսպանիայ, Իտալիա, Ֆրանսիա, Հունաստան), ինչպես նաև մշակութային ուղիների ներկայացուցիչների հետ:

**7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Կառավարման խորհուրդը միաձայն հաստատեց ԵԽ մշակութային ուղիների 16-րդ տարեկան խորհրդակցական համաժողովը Իսպանիայում կազմակերպելու Իսպանիայի Թագավորության առաջարկը: Որոշվեց Ընդլայնված մասնակի համաձայնագրի վարչության նիստը կազմակերպել 2027 թ. փետրվարին, իսկ կառավարման խորհրդի նիստը՝ 2027 թ. մայիսի 6-8-ը Լյուքսեմբուրգում: կառավարման խորհրդի անդամ երկրների ներկայացուցիչների հետ պայմանավորվածություններ են ձեռք բերվել ծրագրի շրջանակում փորձի փոխանակման ընդլայնման և համագործակցության հեռանկարների վերաբերյալ:

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Եվրոպայի խորհրդի մշակութային ուղիներ ծրագրի շրջանակում Հայաստանի ներգրավվածության ընդլայնում,

Ընդլայնված մասնակի համաձայնագրի 2026թ. սեպտեմբերի 22-25-ը տարեկան խորհրդակցական ոչ ֆորմալ համաժողովի Հայաստանի Հանրապետությունում կազմակերպման ապահովում:

**9. Ստորագրությունը, ամսաթիվը**

Ալֆրեդ Քոչարյան

X

ԱԼՖՐԵԴ ՔՈՉԱՐՅԱՆ

Signed by: KOCHARYAN ALFRED

2026-05-11 14:54:25 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

11 մայիսի 2026 թ.